<<«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> շինարարական կատարման

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1»

ք. Կապան

«29» հունվար 2018թ.

«Կապանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Եղիշե Գևորգյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> շինարարական** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն ժամկետը 5 տարի:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19140000 (տասնինը միլիոն մեկ հարյուր քառասուն հազար)ՀՀ դրամ, որից 3190000 (երեք միլիոն մեկ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	Ք. Երևան, Նուբարաշեն փ.11, 21/26
ՀՀ900312400063	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 11500374479000
ՀՎՀՀ 09426088	ՀՎՀՀ 00440841
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 29 » հունվար 2018թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

<<«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> շինարարական աշխատանքների

հազ. ՀՀ դրամ

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Ներքնահարկում 5-րդ առանցքով կրող պատի ուժեղացում				
	Քանդման և հողային աշխատանքներ				
1	3-4-րդ կարգի հողի փորում	խմ	57.82	7.84	453.15
2	Հողի հետլիցք ձեռքով	խմ	43.20	1.77	76.45
3	Ավելացած գրունտի տեղափոխում ձեռքով 10մ հեռավորության վրա	տն	16.46	2.05	33.76
4	Ավելացած գրունտի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	16.46	1.14	18.73
5	Ավելացած գրունտի տեղափոխում 12կմ հեռավորության վրա 2*1,8	տն	16.46	4.85	79.78
6	Ներքնահարկում ուժեղացվող պատերի հիմքի աստիճանների քանդում	խմ	0.79	66.25	52.37
7	Ներքնահարկում արտաքին պատի հիմքի քանդում	խմ	3.16	66.25	209.28
8	Ներքնահարկում արտաքին բետոնե պատերի քանդում	խմ	6.01	29.11	174.86
9	Ե/բետոնե ցոկոլային պատերի քանդում	խմ	1.12	32.68	36.49
10	Մայթի ասֆալտբետոնե ծածկի քանդում	100 քմ	0.15	9.48	1.42
11	Բետոնե եզրաքարերի քանդում	գծմ	15.37	1.39	21.37
12	Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	29.66	1.14	33.74
13	Շին աղբի տեղափոխում 12կմ հեռավորության վրա	տն	29.66	4.85	143.75
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ 5-րդ առանցքում			0.00	0.00
14	Հիմքի հիմնատակի գրունտի խտացում կոպիճով գոլություն ունեցող շենքում	100 քմ	0.14	27.31	3.69
15	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7,5 գոյություն ունեցող շենքում	խմ	0.80	51.24	41.19
16	Միաձույլ ե/բետոնե հիմքերի ուժեղացում ե/բետոնե շապիկով B20 դասի բետոնով հին պատերի և հիմքերի համար գոյություն ունեցող շենքում	խմ	8.52	274.39	2338.90
17	Ամրան A III Φ 12	տն	0.88	585.82	514.39
18	Ամրան A III Φ 10	տն	0.01	603.35	5.53
19	5-րդ առանցքով բետոնե պատերի ուժեղացում ե/բետոնե շապիկով B20 դասի բետոնով	խմ	5.19	278.08	1444.34

20	Ամրան A III Φ 12	տն	0.80	585.82	466.08
21	Ամրան A III Φ 10	տն	0.03	603.35	16.01
22	5-րդ առանցքով ե/բետոնե ենթասյուների ուժեղացում ե/բետոնե շապիկով B20 դասի բետոնով	խմ	4.17	566.61	2361.05
23	Ամրան A III Φ 12	տն	0.76	585.82	444.68
24	5-րդ առանցքին հարակից արտաքին չկրող բետոնե պատերի հիմքերի վերականգում B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	2.53	71.15	180.01
25	5-րդ առանցքին հարակից արտաքին չկրող բետոնե պատերի վերականգում B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	4.75	87.19	413.87
26	Արտաքին առանցքներում արտաքին պատերի և հիմքերի կողային քսովի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի մաստիկով	100 քմ	0.13	144.99	18.41
27	Արտաքին առանցքներում արտաքին պատերի և հիմքերի հորիզոնական քսովի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի մաստիկով	100 քմ	0.59	288.76	170.66
28	Հորիզոնական անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=16մմ 500մմ խորությամբ	100 անցք	2.04	260.75	531.94
29	Նույնը՝ d=16մմ 400մմ խորությամբ	100 անցք	0.24	227.52	54.61
30	Նույնը՝ d=14մմ 500մմ խորությամբ	100 անցք	0.50	259.55	129.77
31	Ուղղաձիգ անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=16մմ 500մմ խորությամբ	100 անցք	0.96	182.56	175.26
32	Նույնը՝ d=16մմ 220մմ խորությամբ	100 անցք	1.44	132.23	190.41
33	Նույնը՝ d=16մմ 250մմ խորությամբ	100 անցք	0.40	137.62	55.05
34	Նույնը՝ d=16մմ 50մմ խորությամբ	100 անցք	3.44	101.67	349.75
35	Նույնը՝ d=16մմ 670մմ խորությամբ	100 անցք	0.04	213.12	8.52
36	Անցքերի լցում պոլիմեր շաղախով	լիտր	30.55	54.12	1653.61
37	Հենարանների տեղադրում և քանդում կրող կմախքի տարրերի տակ՝ ուժեղացվող կոնստրուկտիվ տարրերի վրա եկող բեռնվածքների ժամանակավոր բեռնաթափման համար	100 քմ հորիզոնական պրոյեկցիա	1.71	194.81	333.48
	Դիաֆրագմաներ				
	Քանդման և հողային աշխատանքներ				
38	3-4-րդ կարգի հողի փորում	խմ	16.63	7.84	130.30
39	Հողի հետլիցք ձեռքով	խմ	10.73	1.77	19.00
40	Ավելացած գրունտի տեղափոխում ձեռքով 10մ հեռավորության վրա	տն	9.25	2.05	18.98
41	Ավելացած գրունտի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	9.25	1.14	10.53
42	Ավելացած գրունտի տեղափոխում 12կմ հեռավորության վրա 10,7325*1,8	տն	9.25	4.85	44.85
43	Հարկերում կապային սալերում բետոնե հիմնատակի քանդում	խմ	0.52	24.99	12.89
44	Ներքնահարկում արտաքին պատի հիմքի քանդում	խմ	3.40	66.25	225.56
45	Ներքնահարկում արտաքին բետոնե պատերի քանդում	խմ	1.51	29.11	43.85
46	Ե/բետոնե ցոկոլային պատերի քանդում	խմ	0.59	32.68	19.41
47	Մայթի ասֆալտբետոնե ծածկի քանդում	100 քմ	0.09	9.48	0.89
48	Բետոնե եզրաքարերի քանդում	գծմ	0.10	1.39	0.14
49	Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	22.36	1.14	25.44
50	Շին աղբի տեղափոխում 12կմ հեռավորության վրա	տն	22.36	4.85	108.39
	Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ				
	Դիաֆրագմաներ, սյուներ				
51	Հիմքի հիմնատակի գրունտի խտացում կոպիճով գոլություն ունեցող շենքում	100 քմ	0.09	27.31	2.32

52	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7,5 գոյություն ունեցող շենքում	խմ	1.07	51.24	54.88
53	Միաձույլ ե/բետոնե դիաֆրագմաներիհիմքեր B20 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	2.60	80.13	208.43
54	Ամրան A III Φ 14	տն	0.09	585.82	54.57
55	Ներքնահարկում ե/բետոնե ենթասյուների ուժեղացում ե/բետոնե շապիկով B20 դասի բետոնով	խմ	2.04	566.61	1155.59
56	Ամրան A III Φ 16	տն	1.62	585.82	951.78
57	Ներդիրներ մինչև 4կգ քաշով 60x60x12 չափերով պողպատաթերթ	տն	0.03	1201.38	32.59
58	Միաձույլ ե/բ դիաֆրագմաների կառուցում B20 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	2.85	116.03	330.61
59	Ամրան A III Φ 16	տն	1.20	585.82	705.00
60	Ամրան A III Φ 20	տն	0.21	585.82	124.54
61	Ամրան A I Φ 8	տն	0.01	603.35	3.44
62	Դիաֆրագմային հարակից արտաքին առանցքներով անցնող չկրող բետոնե պատերի հիմքերի վերականգնում B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	3.28	71.15	233.71
63	Նույնի արտաքին չկրող բետոնե պատերի վերականգնում B15 դասի բետոնով գոյություն ունեցող շենքում	խմ	0.61	87.19	53.56
64	Դիաֆրագմաների հարակից արտաքին առանցքներում արտաքին պատերի և հիմքերի կողային քսովի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի մաձիկով	100 քմ	0.03	144.99	4.47
65	Նույնի, հորիզոնական քսովի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի մաձիկով	100 քմ	0.02	288.76	4.45
66	Հենարանների տեղադրում և քանդում կրող կմախքի տարրերի տակ՝ ուժեղացվող կոնստրուկտիվ տարրերի վրա եկող բեռնվածքների ժամանակավոր բեռնաթափման համար	100 քմ հորիզոնական պրոյեկցիա	1.10	194.81	213.43
67	Հորիզոնական անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=20մմ 500մմ խորությամբ	100 անցք	1.10	261.96	288.16
68	Նույնը՝ d=20մմ 400մմ խորությամբ	100 անցք	0.54	228.59	123.44
69	Նույնը՝ d=20մմ 300մմ խորությամբ	100 անցք	0.18	195.21	35.14
70	Ուղղաձիգ անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=20մմ 500մմ խորությամբ	100 անցք	0.92	183.77	169.07
71	Նույնը՝ d=20մմ 220մմ խորությամբ	100 անցք	0.18	132.76	23.90
72	Նույնը՝ d=20մմ 250մմ խորությամբ	100 անցք	0.82	138.23	113.35
73	Նույնը՝ d=20մմ 400մմ խորությամբ	100 անցք	0.24	165.55	39.73
74	Նույնը՝ d=20մմ 670մմ խորությամբ	100 անցք	0.26	214.74	55.83
75	Նույնը՝ d=20մմ 440մմ խորությամբ	100 անցք	0.08	171.20	13.70
76	Ուղղաձիգ անցքերի շաղափում ե/բետոնե կոնստրուկցիաներում գայլիկոնի d=25մմ 670մմ խորությամբ	100 անցք	0.12	140.03	16.80
77	Անցքերի լցում պոլիմեր շաղախով	լիտր	26.87	54.12	1454.27
	Ընդամենը				**20363.35**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Կապան, Ռ. Մինասյան 16 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ900312400063
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀԿՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն փ.11, 21/26
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ11500374479000
ՀԿՀՀ 00440841

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 29 » հունվար 2018 թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1»* *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
<<«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> շինարարական
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Քանդման և հողային աշխատանքներ	Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի կնքման օրվան հաջորդող 30-րդ օրացուցային օր
2	Երկաթ-բետոնյա կոնստրուկցիաներ	Պայմանգրի կնքման օրվան հաջորդող 15-րդ օրացուցային օր	Պայմանագրի կնքման օվան հաջորդող 90-րդ օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի կնքման օրվան հաջորդող 90-րդ օրացուցային օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ900312400063
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն փ.11, 21/26
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«29» հունվար 2018թ. կնքված
***«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1»** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	45611100	<<«Կապանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դ» մասնաշենքի վերակառուցում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության կազմակերպում, տարածքի բարեկարգում, խաղահրապարակի կառուցում>> շինարարական *աշխատանքներ*	-	9000000	19140000	19140000	19140000	19140000	19140000	19140000	19140000	19140000	19140000	19140000	**19140000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ900312400063
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
Ք. Երևան, Նուբարաշեն փ.11, 21/26
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՀ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 29 » հունվար 2018թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրված N ------ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 29 » հունվար 2018թ. կնքված
«ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-18/1» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն